ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Եղեգի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Հայոց լեզու և գրականություն **(19** դասաժամ**),** Ռուսաց լեզու **(26** դասաժամ**)),** Աշխարհագրություն **(11** դասաժամ**) ,** Հասարակագիտություն **(9** դասաժամ**),** ՀԵՊ **(5** դասաժամ**),** ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Χ4 չափսի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ զինվորական տեսակի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ-ի նոյեմբերի 17-ից մինչև 2023թ-ի նոյեմբերի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023** թ. դեկտեմբերի **5**-ին՝ ժամը **14:00**-ին, ՀՀ Սյյունիքի մարզի «Եղեգի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցե՝ Կապան համայնք, Եղեգ բնակավայր, Լիտոդոց, 25/1 շենք : Տեղեկությունների համար զանգահարել 093968673, 096968673 հեռախոսահամարներով: